

ՀԱԳՄՉ 09.20

Երկրորդ հրատարակություն
1 հունվարի 2003թ.
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

Վնասագերծված տարածքի հետազոտություն՝ նմուշների փորձարկման ընթացակարգերի օգտագործման ուղենիշներ

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականագերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱՄ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱՄ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՄ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iv
Նախաբան	v
Ներածություն	vi
Վնասագերծված տարածքի հետազոտություն՝ նմուշների փորձարկման ընթացակարգերի օգտագործման ուղենիշներ	7
1. Ծավալ.....	7
2. Փաստաթղթեր	7
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	7
4. Ակնանագերծման որակի կառավարում (ՈԿ)	8
4.1. Հավաստագրում	8
4.2. Վերահսկում.....	8
4.3. Մաքրմանը հաջորդող ստուգում	9
5. Մաքրմանը հաջորդող ստուգումների կիրառում	9
6. Մաքրմանը հաջորդող ստուգման ընդհանուր պահանջներ և սկզբունքներ	10
7. Նմուշների ստացման ծրագիր.....	10
7.1. Հետազոտությունների մեթոդ	10
7.1.1. Ընդունման չափանիշներ	11
7.1.2. Կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումներ	12
7.1.3. Կրկնակի հետազոտություն.....	12
7.1.4. Մաքրմանը հաջորդող հետազոտության ծախս	12
7.1.5. Հետազոտությունների և արդյունքների գրանցում.....	13
8. Ստուգող մարմին	13
9. Պարտավորություններ	13
9.1. ՄԱԿԱԾ	13
9.2. Ակնանագերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)	13
9.3. Ստուգող մարմին.....	14
9.4. Ակնանագերծող կազմակերպություն.....	14
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	15
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ.....	16
Հավելված Գ (Տեղեկատվական) Նմուշների փորձարկման ծրագիր.....	19
Հավելված Գ-ի Հավելված 1 (Տեղեկատվական) Օրինակ՝ նմուշների չափեր մաքրմանը հաջորդող հետազոտությունների համար.....	23
Հավելված Գ-ի Հավելված 2 (Տեղեկատվական) Փոփոխման ընթացակարգեր	25
Հավելված Գ-ի Հավելված 3 (Տեղեկատվական) Նմուշների փորձարկման լրացուցիչ ուղեցույցներ	28
Փոփոխությունների գրանցում	30

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Մարդասիրական ականագերծման գործողությունների նպատակն է որոշակի տեղամասում և որոշակի խորության վրա հայտնաբերել և հեռացնել կամ վերացնել բուլք ականները և պատերազմի պայթուցիկ մնացորդները (ՊՊՄ): Սույն չափորոշիչի նպատակն է խթանել այնպիսի մի վարքագիծ, որի դեպքում ականագերծող հանրությունը ձգտում է հասնել այս նպատակին՝ մշակելով և կիրառելով կառավարման պատշաճ ընթացակարգեր, ձեռք բերելով և շարունակաբար բարելավելով կառավարիչների և ականագերծողների ունակությունները և արտադրելով ապահով ու արդյունավետ սարքավորումներ:

Մարդասիրական ականագերծման ծրագրերի շահառուները պետք է վստահ լինեն, որ ականագերծված տարածքն ապահով է օգտագործման համար: Սա պահանջում է որակի բարձրագույն մակարդակ ապահովող կառավարման համակարգեր և գործառնական ընթացակարգեր:

ՀԱԳՄՉ 09.10 սահմանում է վնասագերծման որակը՝ կիրառելով երկփուլ մոտեցում: Փուլ 1. Որակի ապահովումը (ՈԱ) ներառում է համակարգերի և գործառնական ընթացակարգերի ստեղծումը և վերահսկումը մաքրման գործընթացից առաջ և նրա ընթացքում: Փուլ 2. Որակի վերահսկումը (ՈՎ) ներառում է մաքրված տարածքի հետազոտման գործընթացը: Մաքրված տարածքի հետազոտումը լրացնում է ՈԱ և լրացուցիչ վստահություն է ստեղծում մաքրման պահանջների բավարարման նկատմամբ: Իրականացման դեպքում հետազոտությունները հանդիսանում են ընդհանուր վնասագերծման գործընթացի կարևոր մասը:

Հետազոտությունների և նմուշների փորձարկման ընդհանուր սկզբունքները և ընթացակարգերը մշակվել են Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) կողմից, և այս հաստատված սկզբունքները և ընթացակարգերը հրատարակվել են ISO 2859-ում: ISO հետազոտության և նմուշների փորձարկման ընթացակարգերը ներկայացնում են այնպիսի կանոններ, որոնք թույլ են տալիս որոշումներ կայացնել արդյունքի որակի վերաբերյալ: Տվյալ ականագերծման գործողությունների դեպքում ‘արդյունք’ է հանդիսանում վնասագերծված հողատարածքը:

Նմուշների փորձարկման արդյունքների վրա մեծապես ազդում են նմուշների ընտրության եղանակները: Հետևաբար պահանջվում են նմուշների փորձարկման հստակ ընթացակարգեր: Եթե ընթացակարգերը չեն սահմանվում և չեն պահպանվում, հետազոտությունների վրա կարող են ազդեցություն ունենալ անհատական կարծիքները և հակումները, որոնք կվատթարացնեն արդյունքները, իսկ ականագերծման դեպքում կնվազեցնեն հողի՝ իր նպատակային օգտագործման համար անվտանգ լինելու մեջ վստահելիության մակարդակը:

Սույն Ուղենիշը ներկայացնում է վնասագերծված տարածքի հետազոտման մեկ մեթոդ, որն է պատահական ընտրանքների դիտարկումը: Հնարավոր են նաև այլ մեթոդներ, որոնք կարող են մշակվել ազգային և տեղական կարիքները և գերակայությունները սահմանելու նպատակով: Սակայն հետազոտման այլ ռեժիմներ մշակող և կիրառող Ականագերծման գործողությունների ազգային մարմինները (ԱԳԱՄ), դոնոր կազմակերպությունները և այլ մարմինները պետք է ապահովեն, որ այդ մեթոդները վիճակագրության տեսանկյունից լինեն գործուն և կարողանան շարունակական կերպով կիրառվել մարդասիրական ականագերծման կոնկրետ պահանջների նկատմամբ:

Վնասագերծված տարածքի հետազոտություն՝ նմուշների փորձարկման ընթացակարգերի օգտագործման ուղենիշներ

1. Ծավալ

Սույն փաստաթուղթն ուղղորդում է վնասագերծված տարածքի հետազոտման աշխատանքները նմուշների փորձարկման միջոցով՝ նմուշների փորձարկման նման գործընթացի իրականացման անհրաժեշտության դեպքում: Այն սահմանում է պայմանները, առաջարկում է կառավարման համակարգը և ընթացակարգերը՝ էլենլով ISO 2859-ից, ինչպես նաև ուղղություններ է սահմանում այս ընթացակարգերի իրականացման վերաբերյալ:

Սույն ուղենիշը կիրառելի է ականների և ՊՊՄ վնասագերծման առաջադրանքների համար, որոնք իրականացվել են ՀԱԳՄՉ 09.10 պահանջներին համաձայն:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղենիշում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար:

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար:

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականագերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականագերծման գործողությունները: Հիմնականում Ականագերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՄ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը:

«Ականագերծող կազմակերպություն» տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետություն, ՀԿ կամ առևտրային կազմակերպություն), որը պատասխանատու է ականագերծման ծրագրեր կամ առաջադրանքներ իրականացնելու համար: Ականագերծող կազմակերպություններն իրենց մեջ ներառում են գլխամասային գրասենյակներն ու օժանդակ տարրերը և բաղկացած են մեկ կամ ավելի ստորաբաժանումներից (տես ստորև):

«Ստորաբաժանում» տերմինը վերաբերում է սարքավորումներ, պարագաներ և այլ հնարավորություններ (ինչպիսիք են ականներ հայտնաբերող շները (ԱՀՇ)) ունեցող մարդկանց խմբերին, որոնք ականազերծման առաջադրանքներ իրականացնելու նպատակով կիրառում են հաստատված ընթացակարգեր, ինչպիսիք են հետազոտությունը, նշագծումը և վնասազերծումը:

«Ստուգող (հետազոտող) մարմին» տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, որն ԱԳԱՄ անունից իրականացնում է մաքրմանը հաջորդող ստուգում(ներ)՝ կիրառելով պատահական ընտրանքների հետազոտման ընթացակարգերը կամ ստուգումների այլ համապատասխան և համաձայնեցված մեթոդները:

4. Ականազերծման որակի կառավարում (ՈԿ)

Ականազերծման որակի կառավարման (ՈԿ) նպատակն է վստահություն ստեղծել (շահառուների, ականազերծող կազմակերպության և ԱԳԱՄ մոտ) առ այն, որ վնասազերծման և որակի պահանջները բավարարվել են և վնասազերծված տարածքն իրականում անվտանգ է օգտագործման համար: Ականազերծման ՈԿ ներառում է միմյանց փոխլրացնող երեք բաղադրիչներ:

4.1. Հավաստագրում

Հավաստագրումը մի ընթացակարգ է, որի միջոցով ականազերծող կազմակերպությունը պաշտոնապես ճանաչվում է կոմպետենտ և ունակ ականազերծման գործողություններն ապահով, արդյունավետ և գործուն կերպով նախագծելու, կառավարելու և գործառնական կերպով իրականացնելու գործում:

Հավաստագրումը կարևոր է ականազերծման ՈԿ ամբողջ գործընթացի համար: Սկզբնական պահից հավաստագրման մանրամասն և ամբողջական ընթացակարգերի առկայությունն ապահովում է ականազերծող կազմակերպության ստեղծումը, մարդկային ռեսուրսների ներկայությունը, սարքավորումներով հագեցումը և անհրաժեշտ համակարգերի, ընթացակարգերի և օժանդակ կառույցների առկայությունը՝ նախքան որևիցե աշխատանք սկսելը: Բացի այդ, հավաստագրման գործընթացում ստուգվում է, թե արդյոք ականազերծող կազմակերպությունն աշխատում է իր ամրագրված համակարգերին և ընթացակարգերին համաձայն և կարող է արդյոք ապահովել պահանջվող չափանիշները: Հավաստագրման գործընթացի արդյունքում ականազերծող կազմակերպության հետ համաձայնեցվում են այն ստանդարտները, ըստ որոնց պետք է իրականացվի ականազերծումը: Այս համաձայնագիրը հետագայում հիմք է հանդիսանում բոլոր վերահսկման գործողությունների համար:

4.2. Վերահսկում

Վերահսկումն իրենից ներկայացնում է աշխատատեղերի, հաստատությունների, սարքավորումների, գործողությունների, գործընթացների, ընթացակարգերի և փաստաթղթերի դիտարկումը, հետազոտությունը կամ գնահատումը համապատասխանաբար որակավորված աշխատակիցների կողմից՝ հաստատելու համար այն, որ ականազերծող կազմակերպությունը գործում է ըստ իր հավաստագրման համաձայնագրի:

Վերահսկումը հիմնականում պասիվ գործողություն է, սակայն կարող է ընդունելի լինել մաքրմանը հաջորդող ստուգումները համակցումը վերահսկման հետ, որպես վնասազերծման աշխատանքների որակի առաջադիմական ստուգման մեթոդ: Վերահսկման դիտարկումների, հետազոտությունների կամ գնահատումների վերաբերյալ կայուն, լավ հաշվետվությունները վերահսկող մարմնի մոտ պետք է վստահություն առաջացնեն հետագա ստուգումների հաճախականության նվազեցման հնարավորության վերաբերյալ նույն կերպ, ինչ և նմուշների փորձարկման հաճախականության նվազեցումը կարող է կիրառվել մաքրմանը հաջորդող փուլում նմուշների փորձարկման մեթոդներում:

4.3. Մաքրմանը հաջորդող ստուգում

Մաքրմանը հաջորդող ստուգումը մաքրված հողատարածքի նմուշի չափման, հետազոտման, փորձարկման գործընթացի կամ այն մաքրման պահանջների հետ այլ կերպ համեմատելու գործընթացն է: Մաքրմանը հաջորդող ստուգումը լրացնում է հավաստագրումը և վերահսկումը և լրացուցիչ վստահություն է ստեղծում մաքրման պահանջների բավարարման հետ կապված:

Նշում՝ Վստահության անհրաժեշտ մակարդակին հասնելու նպատակով կարող է անհրաժեշտ չլինել իրականացնել ականագերծման ՈԿ բոլոր բաղադրիչները: Օրինակ՝ եթե իրականացվում է մանրամասն և բազմակողմանիորեն հավաստագրված և վերահսկվող Ռրակի Ապահովում (ՈԱ), կարող է անհրաժեշտ չլինել իրականացնել մաքրմանը հաջորդող ստուգումներ (ՈՎ):

5. Մաքրմանը հաջորդող ստուգումների կիրառում

ՀԱԳՄՉ 09.20 չի պարտադրում Հավելված Գ-ում բերված նմուշների փորձարկման նախագծի հետևումը (այն կրում է միայն տեղեկատվական բնույթ): Կետ 7-ում նշված է, որ գոյություն ունեն նմուշների փորձարկման մի շարք այլընտրանքային մեթոդաբանություններ, որոնք կարող են կիրառվել: Սակայն Հավելված Գ-ում ներկայացված նմուշների փորձարկման նախագիծը տրամադրում է վիճակագրորեն կիրառելի մեթոդաբանություն, որը մշակված է ականագերծման գործողությունների համար:

Ինչպես նշված է վերը բերված կետ 4-ում, գոյություն ունեն մաքրմանը հաջորդող ստուգումների կիրառման տարբեր եղանակներ: Դրանք ներառում են.

- ա) Մաքրմանը հաջորդող ստուգումների ներառում վերահսկման մեջ այնպես, որ իրականացվեն առաջադիմական հետազոտություններ: Եթե այս գործողությունները հետևեին Հավելված Գ-ում բերված նմուշների փորձարկման ընթացակարգերին, ամբողջ առաջադրանքի ընթացքում հետազոտված ողջ ընտրանքը դեռևս պետք է որոշվեր ՀԱԳՄՉ 09.20-ում բերված չափանիշների կիրառմամբ՝ այսինքն տեղամասի չափից (այն պետք է որոշվի նախապես), հողատարածքի օգտագործումից և հետազոտման մակարդակներից ելնելով: Նմուշները պետք է նաև ընտրված լինեն պատահականորեն, ընդգրկեն մաքրված ամբողջ տարածքը, և պետք է հստակորեն ներկայացված լինեն ընդունման չափանիշները (ներառյալ ուղղիչ/կանխարգելիչ գործողությունները):
- բ) Մաքրմանը հաջորդող ստուգումներն իրականացնել միայն որպես վտանգավոր ճանաչված և տեխնիկական հետազոտության կամ մաքրման գործողությունների ժամանակ վնասագերծված տարածքներում: Ակնհայտ ռիսկի չպարունակող տարածքները կարող են չհետազոտվել,
- գ) Լիովին հրաժարվել մաքրմանը հաջորդող ստուգումներից, քանի որ մանրակրկիտ և բազմակողմանի ՈԱ՝ այլ գործոնների հետ մեկտեղ, արդեն իսկ ԱԳԱՄ-ին տրամադրում է մաքրման որակի մեջ անհրաժեշտ մակարդակի վստահությունը: Այս տարբերակը պետք է կիրառվի խելամտորեն և կարող է օգտագործվել միայն ստուգված տեղեկություններ ունեցող ականագերծող կազմակերպությունների նկատմամբ:

Մաքրմանը հաջորդող ստուգումների կիրառման վերաբերյալ ցանկացած որոշման կայացման առավել կարևոր գործոնն այն է, որ ԱԳԱՄ պետք է վստահ լինի վնասագերծման որակի մեջ: ԱԳԱՄ այն մարմինն է, որն օգտագործողի անունից սովորաբար ընդունում է հողը աշխատանքի հանձնման ընթացքում, և սա ականագերծող կազմակերպության համար հանդիսանում է պատասխանատվությունների փոխանցման կետ (տես ՀԱԳՄՉ 08.30 կետ 4): Այդ պահից սկսած ԱԳԱՄ-ը հող օգտագործողների առաջ պատասխանատու է դառնում հողի ապահովության համար:

Մաքրմանը հաջորդող ստուգումների անհրաժեշտ կամ ոչ անհրաժեշտ լինելու, կամ նրանց իրականացման վերաբերյալ ցանկացած որոշում հիմնականում կայացվում է ԱԳԱՄ կողմից

(տես ստորև բերված նշումը): Մաքրմանը հաջորդող ստուգումների ընթացակարգերը և պատասխանատվությունները, ներառյալ նրանց հիմնավորումը, պայմանները և հրաժարման դրույթները կամ նման ստուգումների փոփոխությունները, պետք է հստակորեն ներկայացվեն ազգային չափորոշիչներում:

Նշում՝ Կարող են լինել իրավիճակներ, երբ դոնոր կազմակերպությունները կամ առևտրային միավոր հանդիսացող հաճախորդները պահանջեն, որ մաքրմանը հաջորդող ստուգումները, ՀԱԳՄՉ 09.20-ի համաձայն, իրականացվեն որպես ֆինանսավորման համաձայնագրերի կամ առևտրային պայմանագրերի մի մաս:

6. Մաքրմանը հաջորդող ստուգման ընդհանուր պահանջներ և սկզբունքներ

Մաքրված հողատարածքի ստուգումը պետք է իրականացվի ԱԳԱՄ անունից գործող ստուգող մարմինների կողմից: Այս ստուգումը կազմում է կառավարման գործընթացի մասը, որը նպատակ է հետապնդում սահմանել մաքրման որակը և անհրաժեշտ վստահություն ներշնչել ակննակերձող կազմակերպության կողմից նշված տարածքից և նշված խորության վրայից բոլոր ակնների և ՊՊՄ-ների հեռացման վերաբերյալ՝ ըստ համաձայնեցված պայմանագրային պարտավորությունների: Մաքրմանը հաջորդող ստուգումների շրջանակներում պետք է ստուգվեն նաև մաքրմանը հաջորդող ստուգումների, նշագծումների և հետազոտությունների ճշտությունը՝ ինչպես նշված է աշխատանքների ավարտման հաշվետվություններում:

Վստահությունը կարող է լինել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ: ISO 2859-0-ում և սույն ՀԱԳՄՉ-ում կիրառվող 'վստահություն' տերմինը վերաբերում է վնասագերծման պահանջվող մակարդակին հասնելու մաթեմատիկական օբյեկտիվ հավանականությանը: Սուբյեկտիվ հավանականությունը, որը ներառում է մարդկային գործոնները, ինչպիսիք են ընկալումը, դատողությունը և կարծիքը, ներառված չեն սույն փաստաթղթում:

Նմուշների փորձարկման միջոցով կատարված հետազոտության արդյունավետությունը և օրինականությունը պահանջում է, որպեսզի վնասագերծման գործընթացը լինի 'շարունակական և վերահսկելի': 'Շարունակական' գործընթացը ենթադրում է, որ հետազոտման ենթակա յուրաքանչյուր միավոր (տես Հավելված Գ, կետ Գ.2.) պետք է ներառի նույն պայմաններով, այսինքն՝ նույն կարողություններն ունեցող, նույն գործառնական ընթացակարգեր և սարքավորումներ կիրառող ստորաբաժանումների կողմից վնասագերծված հողատարածքը:

7. Նմուշների ստացման ծրագիր

Սույն ՀԱԳՄՉ նպատակով մշակվել է վիճակագրորեն ընդունելի համակարգ: Այն ներկայացված է Հավելված Գ-ում որպես տեղեկատվական նշում: Կարող են կիրառվել այլընտրանքային մեթոդաբանություններ, սակայն նրանք պետք է ապահովեն վիճակագրական հիմնավորվածությունը և պետք է կայուն կերպով կիրառելի լինեն մարդասիրական ակննակերծման կոնկրետ պահանջների համար:

Վնասագերծումից հետո հետազոտման ենթակա տարածքի նվազագույն մակերեսը պետք է հաշվարկվի՝ օգտագործելով ISO 2859-0-ից վերցված թվերը, որի օրինակը ներկայացված է Հավելված Գ-ի Հավելված 1-ում: Այս մեթոդաբանության ընդունումից հետո ստուգման ենթակա հողատարածքի առանձին մասեր պետք է պատահական կերպով ընտրվեն ստուգող մարմնի կողմից: Պատահական նմուշների փորձարկման մեթոդները կարող են մշակվել ազգային և տեղական կարիքներին ու գերակայություններին բավարարելու նպատակով, սակայն պետք է համապատասխանեն ISO 2859-0-ում բերված հիմնական սկզբունքներին:

7.1. Հետազոտությունների մեթոդ

Վնասագերծված հողատարածքի նմուշների փորձարկման համար ստուգող մարմնի կողմից օգտագործվող ընթացակարգերը և սարքավորումները պետք է հաստատված լինեն ԱԳԱՄ կողմից և պետք է համաձայնեցված լինեն վնասագերծող կազմակերպության հետ որպես

պայմանագրի կամ համաձայնագրի մի մաս: Նմուշների փորձարկման կամ հետազոտման ընթացակարգերի ցանկացած էական փոփոխություն (ինչպիսիք են նմուշների մեխանիկական կամ ԱՀՇ կողմից օժանդակվող հետազոտման մեթոդների ներդրումը) պետք է համաձայնեցվի ԱԳԱՄ և ականագերծող կազմակերպության միջև նախքան հետազոտության մեկնարկը:

ԱԳԱՄ և ականագերծող կազմակերպությունը պետք է համաձայնեն երկկողմանիորեն ընդունելի ժամկետի վերաբերյալ, որի ընթացքում պետք է տեղի ունենա նմուշների փորձարկումը: Սակայն առաջադրանքի ավարտի դեպքում մաքրմանը հաջորդող ստուգումը և նմուշների փորձարկումը պետք է իրականացվի առաջադրանքի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում:

7.1.1. Ընդունման չափանիշներ

“Հողակտորը” պետք է համարվի ‘մաքրված’ միայն եթե հողակտորի բոլոր նմուշները պայմանագրում ներկայացված խորության վրա գերծ են լինում ականներից և ՊՊՄ-ներից: Այն դեպքում, երբ հողակտորի որևիցե հատված պարունակում է մեկ կամ մի քանի ականներ կամ ՊՊՄ-ներ, սա առաջ է բերում ‘կրիտիկական անհամապատասխանություն’, և այդ նմուշը պարունակող հողակտորը պետք է դիտարկվի որպես ստուգումը չանցած հողակտոր:

Վնասագերծված հողատարածքը կարող է պարունակել պոտենցիալ անհամապատասխանության այլ ցուցանիշներ, ինչպիսիք են մետաղական մնացորդային կտորներ՝ հայտնաբերված մետաղորսիչներով իրականացվող հետազոտությունից հետո կամ պայթուցիկ նյութերի մնացորդային հետքեր՝ հայտնաբերված պայթուցիկ նյութեր հայտնաբերող սարքերով իրականացվող հետազոտությունից հետո: Նման դեպքերը կարող են մատնանշել ականագերծման գործընթացի (սարքավորումների, մարդկանց կամ ընթացակարգերի) պոտենցիալ էական խափանումները և կրկին անգամ առաջ բերել կրիտիկական անհամապատասխանություն: Անհամապատասխանության բոլոր կատեգորիաների ընդունման կամ չընդունման պայմանները պետք է համաձայնեցվեն ԱԳԱՄ և ականագերծող կազմակերպության միջև՝ նախքան մաքրման աշխատանքներն սկսելը:

Մետաղական մնացորդային կտորների առկայության դեպքում կրիտիկական անհամապատասխանության ընդլայնված սահմանումը, որը ներառված է պայմանագրում և ըստ որի ականագերծող կազմակերպությունն օգտագործում է մետաղներ հայտնաբերող սարքեր, պետք է ներառի այնպիսի պայմաններ, ինչպիսիք են.

“Հետազոտմանը ենթարկված հողատարածքի յուրաքանչյուր 10մ² հողակտորի վրա սև մետաղի բեկոտվածքի մեկ կամ ավելի թվով կտորների առկայությունը, որի կշիռը հավասար է կամ գերազանցում է սև մետաղի նվազագույն պարունակությամբ ականի մեջ սև մետաղի պարունակությունը (ինչպես սահմանված է տեխնիկական հետազոտությամբ կամ տեղանքի համար ռիսկերի գնահատմամբ) պետք է դիտարկվի որպես անհամապատասխանություն: Մեկ հողակտորում երեք կամ ավելի առանձին նմուշների հայտնաբերումը, որոնցից յուրաքանչյուրը պարունակում են սև մետաղի նվազագույն պարունակությամբ ականի մեջ սև մետաղի կտորներին հավասար կամ ավել կտորներ, պետք է դիտարկվեն որպես ‘կրիտիկական անհամապատասխանություն’: Այս դեպքում հողակտորը չի բավարարում հետազոտման պահանջներին:

Կրիտիկական անհամապատասխանությունների սահմանման մեջ անհրաժեշտ է հաշվի առնել ականագերծող կազմակերպության կողմից օգտագործվող վնասագերծման մեթոդաբանությունը: Օրինակ՝ ականհայտորեն տեղին չի լինի մետաղական մնացորդային կտորները դիտարկել որպես կրիտիկական անհամապատասխանություն այն դեպքերում, երբ պայթուցիկ նյութերի հայտնաբերման մեթոդները պետք է օգտագործվեն որպես առաջնային վնասագերծման տեխնոլոգիայի մի մաս:

7.1.2. Կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումներ

Ուղղիչ միջոցառումների վերաբերյալ ուղղորդումը պետք է տրամադրվի նախապես, պետք է հիմնված լինի ազգային չափորոշիչների և ուղենիշների վրա և պետք է կազմի ականագերծող կազմակերպության պայմանագրի կամ համաձայնագրի մի մասը:

Ականագերծող կազմակերպությունը պետք է հետազոտի ցանկացած կրիտիկական անհամապատասխանություն, պետք է ստուգող մարմնի միջոցով ԱԳԱՄ ներկայացնի յուրաքանչյուր կրիտիկական անհամապատասխանության պատճառները, ինչպես նաև պետք է ներկայացնի կանխարգելիչ միջոցառումների ծրագիրը, որին կհետևեն ուղղիչ միջոցառումները: ԱԳԱՄ պետք է համաձայնի հետազոտման պահանջները չբավարարող հողակտորների վրա ձեռնարկվելիք կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումների վերաբերյալ:

Ականագերծող կազմակերպությունից կարող է պահանջվել որպես ուղղիչ միջոցառման մի մաս կրկնակի անգամ վնասագերծել հողակտորը այն դեպքում, երբ կրիտիկական անհամապատասխանությունը կայանում է ականի կամ ՊՊՄ մեջ, կամ եթե ականագերծող կազմակերպության կողմից կիրառվող ընթացակարգերը ցուցաբերում են մաքրման պահանջվող որակից ցածր որակ: Ականագերծող կազմակերպությունից կարող է նաև պահանջվել կրկնակի անգամ վնասագերծել հողակտորների ավելի մեծ քանակ մեկ կամ մի քանի հողակտորներում կրիտիկական անհամապատասխանության արդյունքում, եթե բացահայտվում է, որ անհամապատասխանությունն առաջ է եկել առավել մեծ թվով հողակտորների վրա կիրառված ոչ պատշաճ ընթացակարգերի արդյունքում:

Եթե հողակտորը կրկնակի անգամ վնասագերծվել է ականագերծող կազմակերպության կողմից և չի բավարարել հետազոտման պահանջներին, ԱԳԱՄ կարող է պահանջել հողակտորի հերթական մաքրում՝ օգտագործելով այլ գործառնական ընթացակարգեր և այլ սարքավորումներ կիրառող մեկ ուրիշ ստորաբաժանում՝ այդ այլընտրանքային մեթոդների առկայության դեպքում: Այլ դեպքում, մեկ ուրիշ կազմակերպություն կարող է իրականացնել հերթական վնասագերծումը: Դրանից հետո ԱԳԱՄ կարող է որոշել հետ վերցնել նախնական և կրկնակի վնասագերծումն իրականացրած ականագերծող թիմի (կամ կազմակերպության) հավաստագիրը կարճ կամ առավել երկար ժամկետով՝ քանի դեռ սահմանվում և մշակվում են առավել լայն ուղղիչ միջոցառումների նկատմամբ պահանջները:

Եթե կրիտիկական անհամապատասխանության համար ոչ վնասագերծող կազմակերպության և ոչ էլ ստուգող մարմնի կողմից չի ներկայացվում ոչ մի ընդունելի պատճառ, ԱԳԱՄ պետք է պահանջի հողակտորի նշագծում և ցանկապատում մինչ անհամապատասխանության պատճառների բացահայտումը կամ մինչ վնասագերծման առավել վստահելի մեթոդ ձեռնարկելու հնարավորությունը:

7.1.3. Կրկնակի հետազոտություն

Հետազոտման պահանջներին չբավարարող հողակտորները չպետք է ներկայացվեն կրկնակի մաքրման մինչ ականագերծող կազմակերպությունը ստուգող մարմնի միջոցով չձեռնարկի կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումներ ԱԳԱՄ հետ համաձայնեցված կարգով՝ ազգային չափորոշիչների համաձայն: Հողակտորների կրկնակի հետազոտումը պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ հողատարածքը կրկնակիորեն մաքրվել է կամ այլ քայլեր են ձեռնարկվել այն անհամապատասխանությունների վերացման նպատակով, որոնք կարող են առաջ գալ նախնական անհամապատասխանությունների (ությունների) պատճառ հանդիսացող նույն սխալի հետևանքով:

ԱԳԱՄ պետք է հստակեցնի, թե ինչ հետազոտություն պետք է իրականացվի կրկնակի հետազոտման համար՝ նորմալ, թե խորացված (Տես Հավելված Գ, կետ Գ6): Սա պետք է հիմնված լինի վերահսկող մարմնի կողմից տրամադրված ուղղությունների վրա:

7.1.4. Մաքրմանը հաջորդող հետազոտության ծախս

Միշտ գոյություն ունեն ծախսեր, որոնք կապված են կրկնակիորեն վնասագերծված հողատարածքների կրկնակի մաքրման և կրկնակի հետազոտման հետ: Ծախսերի հետ

կապված հարցերը պետք է հստակորեն ներկայացված լինեն ԱԳԱՄ և վնասագերծող կազմակերպության միջև կնքված վնասագերծման պայմանագրում: ԱԳԱՄ կարող է վնասագերծող կազմակերպությունից պահանջել որտեղ հնարավոր է ծածկել կրկնակի վնասագերծման և կրկնակի հետազոտման ծախսերը:

7.1.5. Հետազոտությունների և արդյունքների գրանցում

Օրինակելի նախագիծը, հետազոտման համար կիրառվող մեթոդները և արդյունքները պետք է գրանցվեն հետազոտող մարմնի կողմից՝ ներառյալ վտանգների և պայմանագրում նշված այլ անհամապատասխանությունների վայրը, խորությունը և տեսակները, ինչպիսիք են մետաղական մասնիկները կամ պայթուցիկ մնացորդները: Բոլոր ուղղիչ միջոցառումների մանրամասնությունները ևս պետք է գրանցվեն: Բոլոր գրանցումները պետք է ներկայացվեն ԱԳԱՄ-ին վնասագերծված տարածքի աշխատանքների ավարտի հաշվետվության մեջ ներառելու նպատակով: Վնասագերծված տարածքի հանձնումից հետո ԱԳԱՄ պետք է համակարգի բոլոր վերջնական հաշվետվությունները, տրամադրվելիք վկայականները և օժանդակող տեղեկատվությունը:

8. Ստուգող մարմին

Վնասագերծված հողատարածքի հետազոտումը պետք է իրականացվի ԱԳԱՄ կողմից հավաստագրված և իր անունից ստուգումներ իրականացնելու նպատակով նշանակված ստուգող մարմինների կողմից: ԱԳԱՄ կողմից նշանակված ցանկացած ստուգող մարմին պետք է համապատասխանաբար ունենա անհրաժեշտ աշխատակիցներ, հազեցած լինի սարքավորումներով և կրթված լինի մաքրված տարածքներում ապահով ու արդյունավետ կերպով հետազոտություններ իրականացնելու ուղղությամբ:

Ստուգող մարմինը պետք է ունենա անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք նկարագրում են նրա կառավարման համակարգը (ներառյալ նրա ներքին ՈՎ համակարգը), ստուգման մեթոդները, ստուգման գործընթացում օգտագործվելիք սարքավորումները և ընթացակարգերը:

Որոշ դեպքերում ԱԳԱՄ կարող է նշանակել նույն աշխատակիցներին և՛ որպես վերահսկող մարմին, և՛ որպես ստուգող մարմին, սակայն այս երկու գործողությունները տարբերվում են միմյանցից: Այն դեպքերում, երբ ստուգող մարմինը հանդես է գալիս նաև որպես ազգային հավաստագրող մարմին և/կամ վերահսկող մարմին, իր գործառնությունների միջև կապը պետք է հստակ սահմանված լինի:

9. Պարտավորություններ

9.1. ՄԱԿԱԾ

ՄԱԿԱԾ-ը կամ նրա անունից գործող կազմակերպությունը պետք է.

- ա) Վերահսկի նմուշների փորձարկման ընթացակարգերի արդյունավետությունը, ներառյալ Որակի որոշված սահմանի (ՈՈՍ) համապատասխանությունը (որը ներկայումս սահմանված է որպես 0.35%) և անհրաժեշտության դեպքում առաջարկի չափորոշիչի փոփոխություն,
- բ) Աջակցություն ցուցաբերի և փորձագիտական խորհրդատվություն տրամադրի Ականագերծման գործողությունների ազգային մարմիններին, ստուգող մարմիններին և ականագերծող կազմակերպություններին ISO 2859-ի և այլ համապատասխան միջազգային չափորոշիչների և ուղենիշների կիրառման վերաբերյալ:

Նշում՝ ՈՈՍ մանրամասն բացատրության համար տես Հավելված Բ և Գ:

9.2. Ականագերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը պետք է.

- ա) Պայմանագրերում և համաձայնագրերում հստակեցնի մաքրման ենթակա տարածքը և մաքրման խորությունը:

- բ) Հստակեցնի ականագերծման ազգային ծրագրերում հողատարածքի օգտագործման մակարդակների (ՀՕ1, ՀՕ2 և ՀՕ3) կիրառման չափանիշները (եթե դրանք կիրառելի են նմուշների փորձարկման մեթոդաբանության համար):
- գ) Անհրաժեշտության դեպքում հստակեցնի կրիտիկական անհամապատասխանության դասակարգերը, բացի ականների և ՊՊՄ վտանգներից:
- դ) Ուղղություններ ցույց տա ականագերծման կազմակերպությունների կողմից կրիտիկական անհամապատասխանություն հայտնաբերած ստուգումներից հետո իրականացվելիք կոնկրետ ուղղիչ միջոցառումների վերաբերյալ:
- ե) Հստակեցնի ստուգումների, արդյունքների և ուղղիչ միջոցառումների փաստաթղթերի նկատմամբ կիրառվելիք չափորոշիչները:
- զ) Եթե կիրառելի է, ներկայացնի ծախսերի վերականգնման քաղաքականությունը:
- է) Պահպանի բոլոր ստուգված հողատարածքների փաստաթղթերը:
- ը) Ստեղծի ստուգող մարմին՝ որպես ԱԳԱՄ մի մաս կամ հավաստագրի մի կազմակերպություն՝ ստուգող մարմնի գործառույթներն իրականացնելու նպատակով:
- թ) Վերահսկի ստուգող մարմնի աշխատանքը,
- ժ) Իրականացնի ստուգող մարմնի պարբերական ՈԱ արտաքին աուդիտներ:

9.3. Ստուգող մարմին

Ստուգող մարմինը պետք է.

- ա) Հավաստագրվի ԱԳԱՄ կողմից որպես ստուգող մարմին գործունեություն ծավալելու նպատակով:
- բ) Մաքրման առաջադրանքների ստուգման նպատակով կիրառի Հակասականային գործողությունների ազգային չափորոշիչները: Ազգային չափորոշիչների բացակայության դեպքում ստուգող մարմինը պետք է կիրառի սույն ՀԱԳՄՉ կամ պայմանագրում նշված այլ չափորոշիչներ,
- գ) Ըստ ԱԳԱՄ կողմից նշված կարգի պահպանի նմուշների փորձարկման նախագիծը, ստուգման մեթոդները և ստուգումների արդյունքները պարունակող փաստաթղթերը և ապահովի դրանց մատչելիությունը:

9.4. Ականագերծող կազմակերպություն

Վնասագերծում իրականացնող կազմակերպությունը պետք է.

- ա) Ստանա որպես վնասագերծող կազմակերպություն գործելու համար անհրաժեշտ հավաստագիրը:
- բ) Վնասագերծման համար կիրառի հակասականային գործողությունների ազգային չափորոշիչները: Ազգային չափորոշիչների բացակայության դեպքում ականագերծող կազմակերպությունը պետք է կիրառի ՀԱԳՄՉ կամ պայմանագրում նշված այլ չափորոշիչներ:
- գ) Հետազոտի ցանկացած կրիտիկական անհամապատասխանություն, ստուգող մարմնին ներկայացնի կրիտիկական անհամապատասխանության պատճառները և տրամադրի կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումների ծրագիրը, և
- դ) Ըստ ԱԳԱՄ կողմից նշված կարգի պահպանի մաքրման և անհրաժեշտության դեպքում նաև կրկնակի մաքրման փաստաթղթերը և ապահովի դրանց մատչելիությունը:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Մակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա) ISO 2859-0:1995. Ըստ ստրիբուտների ստուգման համար նմուշների փորձարկման ընթացակարգեր - Մաս 0: Աստրիբուտների նմուշների փորձարկման BS 6001 համակարգի ներկայացում:
- բ) ISO 2859-1:1989. Ըստ ստրիբուտների ստուգման համար նմուշների փորձարկման ընթացակարգեր - Մաս 1. Նմուշների փորձարկման ծրագրերի հատկորոշում՝ ինդեքսավորված ըստ որակի ընդունելի մակարդակի (ՈԸՄ) հողակտորների մեկ առ մեկ ստուգման համար,
- գ) ISO/IEC տեղեկատու – համապատասխանության գնահատում – Ուղենիշներ և չափորոշիչներ, 4-րդ հրատարակություն:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականագերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմինները ու կազմակերպություններ պետք է նախքան ականագերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ **(Տեղեկատվական)** **Տերմիններ, սահմանումներ և հապավումներ**

B.1.

Առողիս

Կառավարման վերահսկման համարժեքության գնահատում՝ ապահովելու ռեսուրսների տնտեսողական և գործունյա օգտագործումը, ակտիվների/միջոցների ապահովության երաշխավորումը, ֆինանսական և այլ տեղեկությունների արժանահավատությունը, համապատասխանեցումը կանոնակարգերին, կանոններին և սահմանված քաղաքականությանը, ռիսկի կառավարման արդյունավետությունը և կազմակերպական կառուցվածքների, համակարգերի և գործընթացների համարժեքությունը:

B.2.

Կրիտիկական անհամապատասխանություն

Հետազոտման ընթացքում $1.0m^2$ մակերեսով հողակտորի կողմից վնասազերծման սահմանված պահանջներին չբավարարելը: ՀԱԳՄՉ սահմանում է կրիտիկական անհամապատասխանության երկու տեսակ.

- ա) ականի կամ ՊՊՄ հայտնաբերում,
- բ) ԱԳԱՄ կողմից սահմանված այլ կրիտիկական անհամապատասխանություններ:

B.3.

Ականազերծող կազմակերպություն

վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետական, ՀԿ կամ առևտրային հաստատությանը), որը պատասխանատու է ականազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ կատարելու համար: Ականազերծող կազմակերպությունները կարող են լինել հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

B.4.

Ականազերծող ստորաբաժանում

Ականազերծող կազմակերպության այլ անվանում ունեցող բաղադրիչ, որը գործառնականորեն հավաստագրվել է ականազերծման մեկ կամ մի քանի հանձնարարված առաջադրանքներ իրականացնելու համար, ինչպիսիք են տեխնիկական հետազոտությունները, ձեռքով մաքրումները, ՊՀՀ կամ ԱՀՇ թիմերի օգտագործումը:

B.5.

Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)

Չպայթեցված զինամթերք (ՉԶ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ): (ՍՈԶ արձանագրություն V):

B.6.

Ստուգում

Ապրանքի կամ ծառայության մեկ կամ մի քանի բաղադրիչների դիտարկում, չափում, հետազոտում, փորձարկում, գնահատում կամ չափագրում և դրանց համեմատում սահմանված պահանջների հետ՝ համապատասխանությունը որոշելու նպատակով:

B.7.

Ստուգող մարմին

Կազմակերպություն, որն ԱԳԱՄ անունից իրականացնում է մաքրմանը հաջորդող ՈՎ՝ կիրառելով պատահական ընտրանքի ստացման ընթացակարգերը, կամ ստուգման այլ պատշաճ և համաձայնեցված մեթոդները:

B.8.

Հողակտորի չափ

Մարդասիրական ակնազերծման համատեքստում տերմինը վերաբերում է...ստուգման համար առաջադրված տարածքին (որն իրենից ներկայացնում է մաքրված հողատարածքի 1.0մ² մակերես ունեցող մի շարք միավորներ):

B.9.

Ակնազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

Ականներ ունեցող յուրաքանչյուր երկրի պետական վարչություն(ներ), կազմակերպություն(ներ) կամ հաստատություն(ներ), որին հանձնարարված է կանոնակարգել, կառավարել և համակարգել ակնազերծման գործողությունները:

Նշում՝ Հիմնականում ազգային ԱԳԱԿ կամ նրան հավասարազոր մարմին գործում է որպես ԱԳԱՄ կամ նրա անունից:

Նշում՝ Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմին համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառույթները:

B.10.

Մաքրմանը հաջորդող ստուգում

Մարդասիրական ակնազերծման համատեքստում տերմինը վերաբերում է...մաքրված հողատարածքի նմուշի չափմանը, հետազոտությանը, փորձարկմանը կամ մաքրման պահանջների հետ այլ կերպ համեմատմանը:

B.11.

Նմուշ

Մարդասիրական ակնազերծման համատեքստում տերմինը վերաբերում է... հողատարածքի վրայից պատահականորեն ընտրված 1.0մ² մակերեսով մեկ կամ մի քանի հողակտորներին:

B.12.

Նմուշի չափ

Մարդասիրական ակնազերծման համատեքստում տերմինը վերաբերում է...նմուշի մեջ 1.0մ² մակերեսով հողակտորների քանակին:

B.13.

Նմուշների փորձարկման նախագիծ

Մարդասիրական ակնազերծման համատեքստում տերմինը վերաբերում է... հստակ նախագծին, որը ներկայացնում է յուրաքանչյուր հողատարածքից ստուգման ենթակա 1.0մ² մակերեսով հողակտորների քանակը (նմուշի չափը կամ նմուշների չափերի շարքը) և հողատարածքի ընդունելի լինելու փաստը սահմանող համապատասխան չափանիշները (ընդունման և մերժման թվերը):

B.14.

Որակի որոշված սահման (ՈՈՍ)

Վնասազերծման գործողություններից ակնկալվող որակի հստակեցում:

Նշում՝ նմուշների փորձարկման ընդունման նպատակով ՈՈՍ հանդիսանում է հստակեցված սահմանագիծ այն ամենի միջև, ինչը կարող է իրատեսական համարվել որպես գործընթացի միջին, և ինչը չի կարող: Այն պետք է հասանելի լինի արտադրողի (ակնազերծող կազմակերպության) համար, սակայն տանելի սպառողի (ԱԳԱՄ կամ պայմանագիր շնորհող գործակալության) համար:

Նշում՝ ՈՈՍ արտացոլում է միջին աղտոտումը (կապված մեկ քառակուսի մետրի վրա անհամապատասխանություն առաջացնող իրերի հետ), որին հետևում են երկար և կայուն

մաքրման գործողություններ: Հավելված Գ-ում բերված աղյուսակը կազմվել է մաքրված տարածքի համար անվանական ՈՈՍ ընդունելով 0.35%:

Նշում՝ 0.35% ընտրվել է որպես ՈՈՍ թիվ այլ կրիտիկական անհամապատասխանությունների հետ համեմատելուց հետո: Քրենֆիլդ համալսարանի կողմից տրամադրված օրինակն այն էր, որ սա նույնն է, ինչ ՄԻԱՎ/ՉԻԱՀ/Հեպատիտով վարակման արդյունքում մահվան կամ լուրջ վնասվածքի ռիսկն Աֆրիկայում՝ վիրաբուժական ձեռնոցների նպատակային գործառույթի ձախողման հետևանքով: Սա համեմատաբար հզոր ՈՈՍ է և համարժեք է նաև նրան, որն օգտագործվում է այլ 'վտանգավոր' արդյունաբերություններում, ինչպիսիք են միջուկային վերամշակման արդյունաբերությունները:

Նշում՝ ՈՈՍ պետք է պարբերաբար վերանայվի ՄԱԿԱՕ կողմից՝ որպես չափորոշիչների վերանայման մի մաս:

Նշում՝ 0.35% ՈՈՍ ՉԻ հավասարեցվում '99.65% մաքրման չափորոշիչի' հետ:

Հավելված Գ (Տեղեկատվական) Նմուշների փորձարկման ծրագիր

Գ.1. Վնասագերծված տարածք

Վնասագերծման ենթակա տարածքը և մաքրման խորությունը պետք է նախապես սահմանվեն տեխնիկական հետազոտության միջոցով կամ այլ վստահելի տեղեկատվության հիման վրա, որը սահմանում է ականների և ՊՊՄ վտանգներ պարունակող տարածքի մակարդակը, և պետք է սովորաբար սահմանվեն պայմանագրում կամ մեկ այլ պաշտոնական փաստաթղթում: (Մաքրման պահանջները մանրամասն ներկայացված են ՀԱԳՄՉ 09.10-ում)

Գ.2. Հետազոտման ենթակա տարածք

Մաքրված տարածքը կարող է հետազոտման նպատակներով բաժանվել մեկ կամ մի քանի 'հողակտորների': Յուրաքանչյուր հողակտորի մեծությունը կախված կլինի բազմաթիվ գործոններից, ներառյալ մաքրման ենթակա ընդհանուր վտանգավոր տարածքը և այն, թե արդյոք այդ տարածքը բաղկացած է մեկ մեծ վտանգավոր տարածքից, թե մի շարք փոքր վտանգավոր տարածքներից:


Վիճակագրական պատճառներով նմուշների ընտրության պահանջը (այսինքն հետազոտման ենթակա տարածքը) համամասնորեն նվազում է հողակտորի աճի հետ մեկտեղ: Հետևաբար, մաքրման աշխատանքների բավարար կերպով ընթանալու դեպքում սովորաբար առավել արդյունավետ կլինի հետազոտման համար ընտրել առավել խոշոր հողատարածքներ:

Օրինակ՝ վտանգավոր տարածքների մի քանի խմբեր պետք է վնասագերծվեն նույն կազմակերպության կողմից նույն եղանակով, իսկ նրանց ընդհանուր մակերեսը կազմում է երեք հեկտար (30,000 մ²): Մաքրման նախնական փուլերի ընթացքում այս հողատարածքը կարող է բաժանվել հինգ հողակտորների՝ յուրաքանչյուրը 2,000 մ²՝ մաքրման աշխատանքների զարգացման հետ զուգահեռ աճելով մինչ 5,000 մ² մակերեսով չորս հողակտորների: Սա կապահովի ստուգող մարմնի կողմից նմուշների փորձարկման ավարտի հնարավորությունը մաքրման իրականացման օրերի ընթացքում:

Գ.3. Նմուշի չափ

Նմուշի չափը (այսինքն յուրաքանչյուր հողակտորում ստուգման ենթակա հողատարածքի մակերեսը) կախված է երեք գործոններից՝

- ա) հողակտորի չափից (տես ստորև բերված Գ.4. կետը);
- բ) հողի նպատակային օգտագործումից (տես ստորև բերված Գ.5. կետը);
- գ) ակնագերծման կազմակերպության փորձից և արդյունավետությունից (տես ստորև բերված Գ.6. կետը):



Պատկեր Գ.1: Մաքրված տարածքի, հողակտորների և ստուգման ենթակա հողի նմուշների պատկեր

Գ.4. Հողակտորի չափ

Ինչպես նշված է վերը բերված Գ.2. կետում՝ նմուշի պահանջվող չափն ուղղակիորեն համամասնական չէ հողակտորի չափին: Այն որոշվում է Հավելված 3-ի Գ.3.4 կետում բերված հավասարության օգնությամբ: Կիրառումը հեշտացնելու նպատակով նմուշի չափի և հողակտորի չափի միջև հարաբերակցության օրինակներն ամփոփված են Հավելված 1-ի աղյուսակում: Կարելի է տեսնել, որ առավել փոքր հողակտորներ պահանջում են համամասնորեն մեծ նմուշներ:

Գ.5. Հողի օգտագործում

Նմուշի չափը կարող է մեծացվել, եթե լրացուցիչ վստահություն է անհրաժեշտ մաքրման որակի վերաբերյալ: Մա կախված կլինի հողի հետագա օգտագործման նպատակներից և նրան բաժին ընկնող մարդկային ու կենդանական հոսքից: Հողի որոշակի կատեգորիաներ, օրինակ՝ ճանապարհները և անցուղիները, ինչպես նաև հորերի շուրջ գտնվող տարածքները, տները և դպրոցները, կպահանջեն վստահության առավել բարձր մակարդակ (ՀՕ1), մինչդեռ փոքր գյուղատնտեսական օգտագործման և հազվադեպ այցելվող հողատարածքը կարող է պահանջել միայն առավել ցածր մակարդակը (ՀՕ3): Հողի օգտագործման երեք մակարդակները (ՀՕ1, ՀՕ2 և ՀՕ3) նախատեսված են ներկայացնելու համար վստահության անհրաժեշտ մակարդակները: Հողի օգտագործման կատեգորիան և դրան հետևող վստահության մակարդակները պետք է որոշվեն ԱԳԱՄ կողմից՝ համաձայն ազգային քաղաքականություններին, և պետք է ներառվեն վնասագերծման պայմանագրում կամ այլ պաշտոնական համաձայնագրում: Մակարդակի հստակեցված չլինելու դեպքում պետք է կիրառվի առավել բարձր մակարդակը՝ ՀՕ1:

Մարդասիրական ակնազերծման նպատակը մնում է նշված տարածքից և նշված խորության վրայից ԲՈԼՈՐ ակնանների և ՊՊՄ հեռացումը կամ վերացումը: Մա հանդիսանում է վնասագերծման կազմակերպության պարտականությունը, ՄԱԿԱՅՆ ԱԳԱՄ պատասխանատու է սույն աշխատանքի որակի ապահովման համար: Հետևաբար ՀՕ1, ՀՕ2 և ՀՕ3 կիրառումը հանդիսանում է ոչ թե ստացված վնասագերծման մակարդակի ցուցանիշը, այլ վնասագերծումն իրականացնող կազմակերպության համար անհրաժեշտ վստահության մակարդակի ցուցանիշը:

ՀՕ1 օգտագործումը պահանջում է ՀՕ2-ի նմուշից մոտ երկու անգամ մեծ չափի նմուշի դիտարկում և հետևաբար թույլ է տալիս ԱԳԱՄ ապահովել վստահության առավել բարձր մակարդակ (10%) այդ մաքրման գործողությունների որակի նկատմամբ:

ԱԳԱՄ որոշում կկայացնի կիրառվելիք ՀՕ կատեգորիայի վերաբերյալ: Այն կարող է որոշել կիրառել ՀՕ1-ը բոլոր հողատարածքների համար, սակայն սա կարող է հանդիսանալ սահմանափակ ռեսուրսների ոչ այդքան արդյունավետ օգտագործում, եթե ակնազերծող կազմակերպություններն ունեցել են հաջողությունների կատարյալ փորձ: Դա բնական է հակասում է ՈՎ և ռիսկի կառավարման այն սկզբունքներին, որոնց վրա հիմնված է ՀԱԳՄՉ:

Մա համարվում է որպես ի սկզբանե բարդ ուղղություն, սակայն կարևոր է հասկանալ, որ նմուշների ընտրության գործընթացի ընթացքում ՀՕ3-ի օգտագործումը ՉԻ հավասարեցվում մաքրման ցածր ստանդարտներին:

Գ.6. Հետազոտման մակարդակներ

ISO 2859-0-ում ներկայացված նմուշների ընտրության ընթացակարգերը կրիտիկական անհամապատասխանությունների հետազոտման նպատակով ներառում են հետազոտման

չորս մակարդակներ: Հետագոտման մակարդակներն արտացոլում են ականագերծող կազմակերպության ապացուցված արդյունավետությունը և կարողությունները: Նրանք խրախուսում են գործունեության բարելավումը: Մաքրված տարածքի հետագոտման համար.

- ա) Ստուգման նորմալ մակարդակը սահմանում է նմուշի միջին չափը, որը կապահովի անհրաժեշտ վստահություն ականագերծող կազմակերպության կողմից որոշակի տարածքից և որոշակի խորության վրայից բոլոր ականների և ՊՊՄ-ների հեռացման և/կամ վերացման նկատմամբ:
- բ) Հետագոտման 'խորացված' մակարդակը պետք է կիրառվի պայմանագրի և վնասագերծման յուրաքանչյուր առաջադրանքի իրականացման սկզբում, երբ ականագերծող կազմակերպությունը դեռևս պետք է ունենա արդյունավետ և գործուն մաքրման փորձ: 'Խորացված' մակարդակը կարող է նաև կիրառվել փորձառու ականագերծող կազմակերպության կողմից նոր և չփորձարկված գործառնական ընթացակարգերի կամ նոր և չփորձարկված սարքավորումների ներդրման դեպքում:
- գ) Հետագոտման 'նվազեցված' մակարդակը բարձրացնում է ապահովության և արդյունավետ վնասագերծման ապացուցված փորձ ունեցող հաջողակ ականագերծող կազմակերպության վարկը,
- դ) 'Հետագոտման բացթողումը' կարող է կիրառվել այն ականագերծող կազմակերպությունների համար, որոնք ունեն անվտանգ և արդյունավետ վնասագերծման մշտական փորձ:

Ընթացակարգերի և կանոնների փոփոխությունները, որոնք ականագերծող կազմակերպություններին հնարավորություն են տալիս տեղափոխվել հետագոտման տարբեր մակարդակների միջև, ներկայացված են Հավելված 2-ում: Փոփոխության ընթացակարգերը և կանոնները նորացնելուց առաջ ԱԳԱՄ պետք է ստանա փորձագիտական խորհրդատվություն:

Օրինակ՝ Հետագոտման համար ներկայացված հողակտորն ունի 8,000մ² ընդհանուր մակերես: Այն ներառում է արոտավայրեր, որոնք պահանջում են (ըստ ԱԳԱՄ) վստահության միջին մակարդակ (ՀՕ2): Օգտագործվում է լավ աշխատանքային փորձ ունեցող ականագերծող կազմակերպություն, և պայմանագիրն արդեն իրականացվում է բավականին երկար ժամանակի ընթացքում, ինչը թույլ է տալիս կազմակերպությանն արժանանալ ԱԳԱՄ վստահությանը: Մա թույլ է տալիս որդեգրել նմուշների փորձարկման նվազեցված ռեժիմը: Եթե այս չափանիշները կիրառվեն Հավելված 1-ի աղյուսակում (հատվածը տես ստորև բերված Գ.2 պատկերում), ապա 444մ² մակերեսով նմուշի վնասագերծված լինելու փաստի ապացուցման դեպքում կապահովվի համապատասխան վստահությունը ամբողջ հողակտորի մաքուր և ապահով լինելու հետ կապված:

<i>Հետագոտման մակարդակներ</i>				
Հողակտորի չափ (մաքրված տարածք) (մ ²)	Հողի օգտագործում	Նվազեցված (մ ²)	Նորմալ (մ ²)	Խորացված (մ ²)
8,000	ՀՕ 1	636	784	1,173
	ՀՕ 2	444	506	585
	ՀՕ 3	334	373	418

Պատկեր Գ.2: Օրինակ՝ նմուշի չափը հողակտորների տարբեր չափերի համար (Հավելված 1-ի հատված)

Ականազերծող կազմակերպության կողմից անվտանգ և արդյունավետ մաքրման շարունակական փորձի ցուցաբերման և արդյունավետ ու գործուն ՈԱ համակարգ ունենալու դեպքում ԱԳԱՄ կարող է դիտարկել այդ ականազերծող կազմակերպությանը ՈՎ նպատակով նմուշների ինքնուրույն ընտրության իրականացման հնարավորության ընձեռումը: Սակայն նմուշների ինքնուրույն ընտրության դեպքում պետք է կիրառվի ԱԳԱՄ կողմից կիրառվող նմուշների ընտրության մեթոդաբանությունը:

Գ.7. Նմուշների փորձարկման սխեմա

Ստուգման ենթակա հողի առանձին կտորներ (սովորաբար 1.0մ² միավորներով) պետք է ընտրվեն պատահականորեն: Ենթադրություններ և դատողություններ կիրառելու միջոցով պատահական ընտրանքներից հեռանալու ցանկացած փորձ կարող է խափանել ստուգման գործընթացի ճշգրտությունը շեղումներ առաջացնելու միջոցով, և հետևաբար պետք է չթույլատրվի:

Հետազոտումը հեշտացնելու նպատակով 1.0մ² մակերեսով նմուշների միավորները պետք է խմբավորվեն տարբեր խմբաքանակների միջև: Յուրաքանչյուր խմբաքանակի միջև գտնվող բոլոր միավորները պետք է հետազոտվեն: Սույն ՀԱԳՄՉ կիրառման նպատակով խմբաքանակների չափը պետք է լինի ոչ մեծ, քան 30 մ²: Խմբաքանակները կարող են լինել ցանկացած ձևի, ներառյալ օրինակ՝ շրջանը, քառակուսին կամ ուղիղը, սակայն հետազոտման համար ներկայացված յուրաքանչյուր առանձին հողակտորի ներսում նրանք պետք է ունենան նույն չափը:

Հողի փոքր կտորները կարող են խմբավորվել մեկ հողակտորի մեջ և ստուգման համար ներկայացվեն որպես մեկ հողակտոր այն պայմանով, որ այդ բոլոր տարածքները մաքրվել են միևնույն ականազերծող կազմակերպության կողմից միևնույն պայմաններով (տես վերը բերված հիմնական տեքստի կետ 4.-ը): Բոլոր տարածքները, անկախ իրենց չափից, պետք է հետազոտվեն – նմուշների փորձարկման գործընթացը պետք է հարաբերական լինի յուրաքանչյուր տարածքի չափին: Այս գործընթացը հայտնի է որպես ‘շերտավորում’:

Օրինակ՝ Ականազերծող կազմակերպությունը պայմանագիր է կնքել նույն տարածքում չորս այգիներ վնասազերծելու համար (երեքը 1,000 մ² և մեկը 2,000 մ² մակերեսով): Կազմակերպությունը լիազորություն է ստացել այդ այգիները մեկ հողակտորի մեջ խմբավորելու և այդ հողակտորը հետազոտմանը ներկայացնելու համար: Հետազոտող մարմինը պետք է շերտավորի նմուշը՝ նմուշների հետազոտման աշխատանքների 40%-ը կենտրոնացնելով առավել խոշոր այգու վրա, իսկ 20%-ը՝ առավել փոքր այգիներից յուրաքանչյուրի վրա:

Հավելված Գ-ի Հավելված 1
(Տեղեկատվական)
Օրինակ՝ նմուշների չափեր մաքրմանը հաջորդող
հետազոտությունների համար

————— Ստուգման մակարդակ —————

Հողատարածքի չափ (Մաքրված տարածք) (մ ²)	Հողի օգտագործում	Նվազեցված (մ ²)	Նորմալ (մ ²)	Խորացված (մ ²)
500	ՀՕ 1	291	331	406
	ՀՕ 2	226	249	275
	ՀՕ 3	181	198	216
1,500	ՀՕ 1	479	570	781
	ՀՕ 2	349	392	446
	ՀՕ 3	269	298	331
3,000	ՀՕ 1	566	687	988
	ՀՕ 2	403	455	523
	ՀՕ 3	306	340	380
5,000	ՀՕ 1	609	746	1,100
	ՀՕ 2	429	486	561
	ՀՕ 3	323	360	404
8,000	ՀՕ 1	636	784	1,173
	ՀՕ 2	444	506	585
	ՀՕ 3	334	373	418
15,000	ՀՕ 1	659	815	1,235
	ՀՕ 2	458	522	605
	ՀՕ 3	342	383	430
40,000	ՀՕ 1	676	839	1,283
	ՀՕ 2	468	534	620
	ՀՕ 3	349	391	440
200,000	ՀՕ 1	685	851	1,307
	ՀՕ 2	472	540	628
	ՀՕ 3	352	394	444

Պատկեր C.1.1: Օրինակ՝ նմուշների չափեր տարբեր հողակտորների չափերի համար
(Ստացված ISO 2859-0-ից՝ օգտագործելով Հավելված 3-ի կետ Գ.3.4.-ու բերված
հավասարությունը)

Նշումներ.

(1) Ստուգման մակարդակներն արտացոլում են ակննազերծող կազմակերպության ապացուցված արդյունավետությունը և կարողությունները: Նրանք խթանում են գործունեության բարելավումը: Կանոնների փոփոխությունը, որն ակննազերծող կազմակերպություններին թույլ է տալիս տեղափոխվել հետազոտման տարբեր մակարդակների միջև, ներկայացված է Հավելված 2-ում:

(2) ՀՕ1 վերաբերում է հողի առավել զգայուն կատեգորիային, իսկ ՀՕ3-ը՝ առավել քիչ զգայուն կատեգորիային: Հողի օգտագործման պահանջվող մակարդակը պետք է որոշվի ԱԳԱՄ կողմից ազգային քաղաքականությանը համաձայն, և պետք է ներառված լինի պայմանագրում:

(3) Նմուշի չափը ներկայացնում է ստուգման ենթակա առանձին մեկ քառակուսի մետր մակերեսով միավոր հողակտորների թիվը:

(4) Համակարգչային մի պարզ ծրագիր, որը թույլ է տալիս կազմակերպություններին առավել ճշտորեն հաշվարկել նմուշների փորձարկման պահանջները, քան սույն Հավելվածում բերված օրինակները, ներկայացված է ՀԱԳՄՉ կայքէջում՝ www.mineactionstandards.org կամ առկա է ՀԱԳՄՉ լազերային սկավառակներով:


Օրինակ.

Հետազոտման համար ներկայացված հողակտորն ունի 8,000մ² ընդհանուր մակերես: Այն ներառում է արտավայրեր, որոնք պահանջում են (ըստ ԱԳԱՄ) վստահության միջին մակարդակ (ՀՕ2): Օգտագործվում է լավ աշխատանքային փորձ ունեցող ականազերծող կազմակերպություն, և պայմանագիրն արդեն իրականացվում է բավականին երկար ժամանակի ընթացքում, ինչը թույլ է տալիս կազմակերպությանն արժանանալ ԱԳԱՄ վստահությանը: Սա թույլ է տալիս որդեգրել նմուշների փորձարկման նվազեցված ռեժիմը: Եթե այս չափանիշները կիրառվեն վերը բերված աղյուսակում, ապա 444մ² մակերեսով նմուշի վնասազերծված լինելու փաստի ապացուցման դեպքում կապահովվի համապատասխան վստահությունը, որ այդ հողակտորի ներսում նշված տարածքը մաքրվել է նշված խորության վրա:

Հավելված Գ-ի Հավելված 2 (Տեղեկատվական) Փոփոխման ընթացակարգեր

Գ.2.1. Ընդհանուր պահանջներ

Փոփոխման ընթացակարգերը պետք է կիրառվեն հետազոտման համար ներկայացված մի շարք հողակտորների հետազոտման համար: Հետազոտման ծրագրի ընտրությունը պետք է ներառի հետազոտման համար ներկայացված հողակտորների դիտարկումը և որակավորումների կիրառումն ու անձնակազմի փորձառությունը, ինչպես նաև ընդունելի ՈՎ համակարգի արդյունավետ կիրառումը: Ստորև ներկայացված Գ.2.1. գծապատկերը ցույց է տալիս փոփոխման ընթացակարգերի կիրառումն ականազերծող ստորաբաժանման համար:



Գծապատկեր Գ.2.1: Կանոնների փոփոխման գծապատկեր

Գ.2.2. Հետազոտությունների մակարդակների միջև փոփոխությունների կատարման ուղենիշներ

Գ.2.2.1. Ընդհանուր սկզբունքներ

Հետազոտության խորացված մակարդակը պետք է կիրառվի հետազոտման գործընթացի սկզբում կամ ցանկացած պայմանագրի կամ համաձայնագրի շրջանակներում մաքրված հողատարածքի առաջին հողակտորի հետազոտման ժամանակ, եթե այլ բան նախատեսված չէ ԱԳԱՄ կողմից:

Խորացված, նորմալ, նվազեցված կամ բացթողնված հետազոտությունը պետք է շարունակվի հաջորդ հողակտորների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխման ընթացակարգերը փոփոխություններ են պահանջում ըստ հետևյալ չափանիշների:

Գ.2.2.2. Անցում նորմալից խորացված մակարդակին

Երբ վերջին հինգ հաջորդական հողակտորներից երկուսը չեն համապատասխանում վնասագերծման չափանիշներին և պահանջում են ուղղիչ միջոցառումների իրականացում:

Գ.2.2.3. Անցում խորացվածից նորմալ մակարդակին

Երբ հետազոտման են ներկայացվել հինգ հաջորդական հողակտորներ և բոլորն էլ եղել են ընդունելի:

Գ.2.2.4. Անցում նորմալից նվազեցված մակարդակին

Երբ բավարարվում են հետևյալ պայմանները.

- ա) Նախորդ տասը հողատարածքները ներկայացվել են նորմալ հետազոտման համար և բոլորը եղել են ընդունելի,
- բ) Մաքրման գործողությունները եղել են կայուն, չեն եղել երկար դադարներ կամ խափանումներ, ինչպես նաև զգալի փոփոխություններ գործառնական ընթացակարգերում և սարքավորումներում:

Գ.2.2.5. Անցում նվազեցվածից նորմալ մակարդակին

Երբ առկա է նշված իրավիճակներից մեկը.

- ա) մեկ հողակտոր ընդունելի չէ և պահանջում է ուղղիչ միջոցառումների իրականացում,
- բ) մաքրման աշխատանքները դառնում են անկանոն կամ հետաձգվում են վատ եղանակի կամ այլ արտաքին, կամ ներքին գործոնների հետևանքով,
- գ) այլ պայմաններ հիմնավորում են նորմալ հետազոտության իրականացումը, ինչպիսիք են հիմնական աշխատակիցների, գործառնական ընթացակարգերի կամ սարքավորումների փոփոխությունը:

Գ.2.2.6. Անցում նվազեցվածից խորացված մակարդակին

Երբ տեղի է ունենում մի իրադարձություն, որը ցույց է տալիս շեղում գործառնական ընթացակարգերից կամ տեղերում իրականացվող ոչ պատշաճ հետազոտությունները:

Գ.2.2.7. Անցում նվազեցված մակարդակից դեպի նմուշների փորձարկման բացթողումը

Հողակտորի նմուշների փորձարկման բացթողումը կարող է օգտագործվել այն ժամանակ, երբ հողակտորների խմբերը պարբերաբար առավել լավ ցուցանիշներ են արձանագրում, քան ՈՈՍ (տես Հավելված 3-ի կետ Գ.3.1): Հողակտորի նմուշների հետազոտման բացթողումը թույլ է տալիս հետազոտման նպատակով պատահականորեն ընտրել երեք հողակտորներից մեկը:

Նվազեցված հետազոտման իրականացման ժամանակ հողակտորի հետազոտության բացթողումը կարող է կիրառվել այն դեպքերում, երբ ապահովված են լինում հետևյալ պայմանները.

- ա) Նախորդ հինգ հողակտորները ներկայացվել են նվազեցված հետազոտության համար և բոլորն ընդունվել են առաջին իսկ հետազոտության արդյունքում:
- բ) Վնասագերծման մակարդակը կայուն է, տեղի չեն ունեցել երկարատև դադարներ կամ խափանումներ և չեն կատարվել գործառնական ընթացակարգերի կամ սարքավորումների էական փոփոխություններ:
- գ) Ակննդերձող կազմակերպության կառավարման համակարգը համարվում է ընդունելի,
- դ) Հողակտորի հետազոտման բացթողումը համարվում է ընդունելի ԱԳԱՄ կողմից:

Գ.2.2.8. Անցում հողակտորի բացթողումից դեպի նորմալ մակարդակ

Երբ նախնական հետազոտության ընթացքում տեղի է ունենում հետևյալ իրադարձություններից մեկը.

- ա) հողակտորը չի ընդունվում,
- բ) գործողությունը դառնում է անկանոն կամ հետաձգվում է,
- գ) այլ պայմաններ հիմնավորում են նորմալ հետազոտության իրականացումը, ինչպիսիք են հիմնական աշխատակիցների, գործառնական ընթացակարգերի կամ սարքավորումների փոփոխությունը, կամ եթե հետազոտման համար ներկայացված հողակտորները գնահատվում են ավելի ցածր, քան սահմանված ՈՈՍ: Այս չափանիշը կիրառվում է ‘այլ անհամապատասխանությունների’ ընդունման կանոնների նկատմամբ:

Նշում՝ Եթե հողակտորի բացթողման ռեժիմով աշխատող կազմակերպությունն ունի չընդունված հողակտոր, պետք է դիտարկվի նախկինում բացթողնված հողակտորների հետազոտությունը:

Հավելված Գ-ի Հավելված 3 (Տեղեկատվական)

Նմուշների փորձարկման լրացուցիչ ուղեցույցներ

Գ.3.1. Որակի որոշված սահման (ՈՈՍ)

ՈՈՍ ներկայացնում է վնասագերծման գործողություններից պահանջվող որակը: Նմուշների հետազոտման ընդունման նպատակով ՈՈՍ ցույց է տալիս ժամանակի ընթացքում իրատեսական համարվող ամենի միջև ընկած սահմանագիծը: Այն պետք է հասանելի լինի ականագերծող կազմակերպությանը, սակայն տանելի ԱԳԱՄ համար՝ ներկայացնելով հետագայում մաքրված հողատարածքն օգտագործող անհատների և համայնքների հետաքրքրությունները:

Ականների և ՊՊՄ վնասագերծման դեպքում ՈՈՍ արտացոլում է միջին աղտոտումը (կապված մեկ քառակուսի մետրի վրա անհամապատասխան իրերի քանակի հետ), որը հետևում է երկարատև և կայուն գործընթացի իրականացմանը: Հավելված 1-ում բերված աղյուսակը կազմվել է մաքրված տարածքի համար անվանական ՈՈՍ ընդունելով 0.35%:

ՈՈՍ պետք է պարբերաբար վերանայվի ԱԳԱՄ կողմից:

Գ.3.2. Հողի օգտագործում

Նմուշի չափը կարող է մեծացվել, եթե լրացուցիչ վստահություն է անհրաժեշտ հողատարածքի որոշակի կատեգորիաների մաքրման որակի վերաբերյալ, ինչպիսիք են ճանապարհները և անցուղիները, ինչպես նաև հիվանդանոցների, դպրոցների և բնակելի շենքերի շուրջ ընկած տարածքները: Հողի օգտագործման երեք մակարդակները (ՀՕ1, ՀՕ2 և ՀՕ3) նախատեսված են ապահովելու համար այս լրացուցիչ վստահությունը: Հողի օգտագործման պահանջվող մակարդակը պետք է որոշվի ԱԳԱՄ կողմից՝ համաձայն ազգային քաղաքականության հետ և պետք է ներառված լինի պայմանագրում: Մակարդակի հստակեցված չլինելու դեպքում պետք է կիրառվի ՀՕ1-ը: (Տես Հավելված Գ-ի Գ5 կետը)

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս վստահության մակարդակները, որոնք կիրառվել են սույն չափորոշիչի մշակման ժամանակ: Մեկնաբանությունը հետևյալն է.

ՀՕ1 մակարդակում Նորմալ հետազոտություններից հետո միշտ գոյություն ունի առնվազն 95% վստահություն, որ մաքրման որակը միշտ ավելի բարձր է, քան ՈՈՍ

Հողի օգտագործում	Նվազեցված	Նորմալ	Խորացված
ՀՕ 1	91%	95%	99%
ՀՕ 2	81%	85%	89%
ՀՕ 3	71%	75%	79%

Աղյուսակ Գ.3.1: Վնասագերծման որակի մեջ վստահություն

Գ.3.3. Հողակտորի չափ

Մաքրման ենթակա տարածքը և մաքրման խորությունը պետք է նախապես սահմանվեն տեխնիկական հետազոտության միջոցով կամ հիմնվելով այլ վստահելի տեղեկությունների վրա, որը սահմանում է ականներ և ՊՊՄ պարունակող հողատարածքի մակարդակը: Մաքրման պահանջները պետք է համապատասխանեն ՀԱԳՄՉ 09.10-ին և սովորաբար պետք է սահմանվեն պայմանագրով կամ այլ պաշտոնական փաստաթղթերով:

Մաքրված տարածքը կարող է ներկայացվել հետազոտության համար հողի մեկ կամ մի քանի 'հողակտորներով': Յուրաքանչյուր հողակտորի չափը պետք է հաշվի առնի 'շարունակական գործընթացի' ապահովման անհրաժեշտությանը: Յուրաքանչյուր հողակտորի չափը պետք է նախապես համաձայնեցվի ակննազերծվող կազմակերպության և ստուգող մարմնի կողմից:

Նմուշի չափը (տես ստորև բերված կետ Գ.3.4-ը) խթանում է առավել խոշոր հողակտորների օգտագործումը: Առավել խոշոր հողակտորները պահանջում են համամասնորեն քիչ նմուշների դիտարկում՝ վստահության միևնույն մակարդակն ապահովելու նպատակով: Սակայն առավել խոշոր հողակտորներն առաջացնում են այնպիսի կառավարման ռիսկեր, որոնք պետք է համապատասխանեցվեն նմուշների դիտարկման ծախսերին: Առավել խոշոր հողակտորների հետազոտության ձախողումն առավել ծախսատար է, քան փոքր հողակտորներինը:

Նմուշների հետազոտման ծախսերի կրճատման նպատակով մի քանի փոքր վնասազերծված տարածքների միավորումը մեկ հողակտորի մեջ պահանջում է մաքրման շարունակական և կայուն գործընթաց, որը կարող է գործնականում հնարավոր չլինել: Հողակտորների օպտիմալ մեծությունը կսահմանվի փորձից և տեղական յուրահատկություններից ելնելով:

Գ.3.4. Նմուշի չափ

Հետազոտման ենթակա նմուշի չափի հաշվարկն իրականացվում է ներդնելով անհրաժեշտ պարամետրերը, հողակտորի չափը, հողի օգտագործման վստահելիության մակարդակը և ստուգման մակարդակը: Օրինակը տես Հավելված 1-ի Գ.1.1 պատկերում:

Համակարգչային մի պարզ ծրագիր, որը թույլ է տալիս կազմակերպություններին առավել ճշտորեն հաշվարկել նմուշների փորձարկման պահանջները, քան սույն Հավելվածում բերված օրինակները, ներկայացված է ՀԱԳՄՉ կայքէջում՝ www.mineactionstandards.org կամ առկա է ՀԱԳՄՉ լազերային սկավառակներով: Ծրագիրը հիմնված է Windows® ծրագրային փաթեթի վրա և իր հաշվարկների հիմքում օգտագործում է ստորև բերված բանաձևը:

ISO 2859-0-ում մշակված կրիտիկական անհամապատասխանությունների հետազոտման մեթոդի համար նմուշի չափը որոշվում է ստորև ներկայացված բանաձևի կիրառմամբ:

$n = (N - d/2)(1 - B^{1/(d+1)})$	
որտեղ՝	
n	նմուշի չափը – կլորացված մինչ մոտակա ամբողջ թիվը
N	հողակտորի չափը մ ² -ով
B	առնվազն 1 ական/ՊՊՄ գտնել չկարողանալու հավանականությունը, այսինքն՝ վստահության մակարդակը
p	աղոտոված հողատարածքի առավելագույն հատվածը, այսինքն՝ մաքրման որակը
d	հողակտորում թույլատրելի չհամապատասխանող իրերի առավելագույն թիվը - կլորացված մինչ մոտակա ամբողջ թիվը (d = N x p)

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի: ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	Դեկտեմբերի 1, 2004թ.	<p>1. Ֆորմատի փոփոխություններ:</p> <p>2. Տեքստի խմբագրության աննշան փոփոխություններ:</p> <p>3. Տերմիններում, սահմանումներում և հապավումներում կատարված փոփոխություններն անհրաժեշտ էին սույն ՀԱԳՄՉ համապատասխանությունը ՀԱԳՄՉ 04.10 հետ ապահովելու համար:</p> <p>4. Էական փոփոխություններ.</p> <p>ա) Կետ 4. Նոր նախադասության ավելացում:</p> <p>բ) Կետ 5.1.1. Թեք տառերով գրված օրինակի մեջ փոփոխության կատարում:</p> <p>գ) Կետ 5.1.2. Վերնագրի փոփոխություն և տեքստում 'ստուգող մարմին' արտահայտության փոխարինում 'ԱԳԱՄ'-ով x 3:</p> <p>դ) Կետ 5.1.3. Տեքստի փոփոխություններ, ներառյալ 'ստուգող մարմին' արտահայտության փոխարինում 'ԱԳԱՄ'-ով x 2 և 'ականագերծման գործողությունների ազգային մարմնի' փոխարինում 'ստուգող մարմնով':</p> <p>ե) Կետ 5.1.4. Վերջին նախադասության փոփոխություն:</p> <p>զ) Կետ 6. Նոր կետ:</p> <p>է) Կետ 7.2, նախկինում 6.2. 'դ' ենթակետի փոփոխություն, նոր 'ը' և 'թ' ենթակետեր:</p> <p>ը) Կետ 7.4, նախկինում 6.4. 'զ' ենթակետի փոփոխություն:</p> <p>թ) Հավելված Գ, կետ Գ.3, 'դ' ենթակետի հեռացում:</p> <p>ժ) Հավելված Գ-ի Հավելված 1, գծապատկեր C.1.1. Հողակտորների չափերը (ձախ պունակում) փոփոխվել են ցույց տալու համար միայն մեկ հողակտորի չափ, այլ ոչ մի շարք չափեր, ինչպես ներկայացված էր նախկինում: Որտեղ անհրաժեշտ է, նմուշի չափը փոփոխվել է՝ ցույց տալու համար նմուշի ճիշտ չափը հողակտորի տրված չափի համար, հողակտորի օգտագործումը և ստուգման մակարդակը:</p>
2	Հուլիսի 23 2005թ.	<p>1. Կետ 5.1.1, երկրորդ և երրորդ պարբերություններում, 'ական' բառի հեռացում 'մետաղական ականներ հայտնաբերող սարքեր' արտահայտությունից (երկու անգամ):</p>
3	Հունվարի 24, 2007թ.	<p>1. Աննշան փոփոխություններ/նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում լրացումների կատարում:</p> <p>2. Ներածության տեքստի փոփոխություն երրորդ պարբերության մեջ:</p> <p>3. Կետ 1, տեքստի փոփոխություն 'Շրջանակներով':</p> <p>4. 'Ականագերծման ՈՎ' վերաբերյալ նոր կետ 4-ի ավելացում:</p> <p>5. 'Մաքրմանը հաջորդող ստուգումների կիրառման' վերաբերյալ նոր կետ 5-ի ավելացում:</p> <p>6. Կետ 7 Նմուշների փորձարկման նախագծում առաջին պարբերության մեջ ավելացումների կատարում:</p> <p>7. Կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումներ Կետ 7.1.2-ում 4^{րդ} պարբերության ավելացում</p>

		<p>և 5^{րդ} ու 6^{րդ} պարբերությունների ներառում:</p> <p>8. Կետ 7.1.3 – Կրկնակի ստուգման մեջ տեքստի փոփոխություն:</p> <p>9. Մաքրմանը հաջորդող ստուգման ծախսեր նոր Կետ 7.1.4-ի ավելացում:</p> <p>10. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ) Կետ 9.2-ում նոր ‘զ’ ենթակետի ավելացում:</p> <p>11. ‘Ականներ և ՊՊ’ տերմինի ներառում:</p> <p>12. Ամբողջ ՀԱԳՄՉ-ից ‘սպառնալիք’ տերմինի հեռացում:</p>